

**ԹԱԹՈՒ ՀՈՒՅՍ**

# **ԲԱՍՏԻՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԵՐԵՎԱՆ**



**ԱՐՄԱՎ, 2015**

ՀՏԴ 891.981-1 Հուրյան  
ԳՄԴ 84Հ - 5  
Հ 177

## Հրատարակվել է պետական պատվերով

Կազմեց Արքմենիկ Նիկողոսյանը

### Հուրյան Թաթուլ

Բանաստեղծություններ / Թ. Հուրյան. /Կազմ. Ա.  
Նիկողոսյան/. - Եր.: Արմավ, 2015. - 128 էջ:

Գրքում ընտրվել են Հայրենական Մեծ պատերազմում  
զոհված Թաթուլ Հուրյանի (1912-1942) լավագույն բանաս-  
տեղծություններն ու պոեմները: Սույն երկերը  
ժամանակին բարձր են գնահատվել գրական  
միջավայրում:

ՀՏԴ 891.981-1 Հուրյան  
ԳՄԴ 84Հ - 5

ISBN 978-9939-863-01-6

© «Արմավ», 2015

**ՆՎԻԲՎՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ  
ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-  
ԱՄՅԱԿԻՆ**



## ՎԱՂԸ ՄԵՌՆԵՄ ԳՈՒՅԵ

Վաղը մեռնեն գուցե. գուցե վաղը մեռնեն,  
Եվ շեփորը շողա գարնան արևի տակ,  
Ձայնը արձագանքի, հասնի ձոր ու լեռներ,  
Լեռներ, չքնաղ լեռներ, գուցե վաղը մեռնեն:

Գուցե վաղը մեռնեն, մեր արևի ներքո,  
Կյանքն էլ, մահն էլ այնքան քաղցր են, թանկագին,  
Ահա իմ սիրտը ձեզ, լի կարոտով, երգով,  
Ահա իմ սիրտը ձեզ,- հուրը արեգակի:

Առեք նրան, լցրեք ձեր հույզը կրկնակի,  
Թող փոթորկուն լինի, լինի մաքառասեր,  
Ինչքան մահը դաժան իմ դրները թակի,  
Այնքան կյանքի գովքը ես կարոտով կասեն:

## ՄԵԾ ՊՈՆՏԻՆ

Գնում է ուղին կիրճերով կեռման,  
Արևն է սարից պռունկը հանում,  
«Անպերն էլ ահա ուղտերի նման  
Նոր են ջուր խնած ձորից բարձրանում»:

Ու ձամփի եզրի հսկա ուռենին,  
Կանաչ ձյուղերն է հանդարտ օրորում.  
Այստեղ հանգչում է հեզ Մարոյի դին,  
Ու գետն է նորից աղմկում ձորում:

Անուշը տված մազերը հովին,  
Երգում է, երգը անտառն է լսում,  
Այնպես հնայուն ու այնպես թովիչ,  
Արծաթ զնգոցով, կարծես երազում:

Ու բլրորն ահա նորից կենդանի,  
Ելնում են, խոսում քո երգի լեզվով,  
Ծուխն է բարձրանում քո Լոռու տանից,  
Սարից քամին է փչում մեղմ ու զով:

Արևը, որպես հողագործ մի ժիր,  
Արդար քրտինքով նոր սերն է ցանում,-  
Սարը մնում է հաստատ իր ուժին,  
Անպերն են գալիս, անպերն են գնում:

Ինչքան սև անպեր քո գլխից անցան,  
Ինչքան փորձության օրեր անարև,

Քեզ քո երգերը կանգնեցին արձան.  
Մեր դարը նրան ծաղկով զարդարեց:

Դու մեծացել ես Լոռու ձորերում,  
Ձորերի նման սիրտդ խոր ու մեծ,  
Դու մեծացել ես Լոռու լեռներում  
Լեռների նման վեհ ու երկնամերձ:

Անուշը սրտում վիշտը անհատակ,  
Այցի է եկել քեզ լուսաբացին,  
Կանաչ վիթխարի ընկուզենու տակ  
Հողվորների հետ նստել ես հացի:

Բացել ես սրտիդ աղբյուրը համեղ  
Ու ջուր ես տվել հոգնած անցորդին,  
Այդ աղբյուրից են բռով ջուր խմել  
Ու չեն հագեցել Համբոն ու որդին:

Այսպես, բացել ենք մենք հիմա, վարպետ,  
Երգի աղբյուրը քո հազարակունք,  
Դու լուսակարկաչ երգերի Դեբեդ,  
Դու սրտերի սիրտ, մաքուրից մաքուր:

Մեր ժողովուրդն էր քո լեզվով խոսում,  
Նրա մեծ սիրտն է քո մեջ վեհաբար,  
Դու նրա որդին պայծառ, սիրասուն,  
Նրա երգիչը քաղցրաբարբառ:

Այդ է որ այսօր ժողովուրդը մեր,  
Որը ազատ է քաղցից, կապանքից,

Կարդում է սիրտդ, երգերդ անմեռ  
Ու թարմ է պահում հիշատակդ անգին:

Ջքնաղ Կովկասի մայրական գրկում  
Ժողովուրդները մեր եղբայրական,  
Կառուցում են նոր առօրյան բերկրուն.  
Եվ է՛լ ավելի չքնաղ ապագան:

Եվ հայրենիքը քո՝ հնում ավեր,  
Դարձել է պարտեզ չքնաղ, անթառամ.  
Եվ այն, ինչ դու ես սիրով երագել,  
Իրականացել, ծաղկել է փարթամ:



## Ե. ՉԱՐԵՆՑԻՆ

Կանգնել ես վստահ և քեզ ես հսկում...  
Կիրձերի խորքից գալարվող քամին  
Տուրիստի նման ելնում է Պամիր:

Որպես քնարը Իլյա Սելվինսկու,  
Ոչ մի հանգի դեմ չի կախում գլուխ,  
Այդպես քո երգն է հորիզոններ խլում:

\*\*\*

Մենք էլ կզանք քեզ հետ, բայց չենք ապրի քեզ հետ,  
Այս աշխարհի վրա քեզ պես փառքով,  
Նա, որ նախատեսավ մեզ ի վերուստ պոետ,  
Ավելի ընդգծեց ձիրքն ու հանձարը քո:

Եվ աշխարհից կերթանք մեր այս արևավոր,  
Ուր մենք հյուր ենք այժմ մի կարճատև,  
Արմատից կհանի կսկիծով ու ցավով  
Նույն անողորմ սահր, որ քո կյանքը հատեց:

Մենք էլ կզանք քեզ հետ, բայց չենք ապրի քեզ հետ  
Այս աշխարհի վրա քեզ պես փառքով,  
Նա, որ նախատեսավ մեզ ի վերուստ պոետ,  
Ավելի ընդգծեց ձիրքն ու հանձարը քո...

## ՀՈՄԵՐՈՍ

Այդ ինչ նեա է, ծերուկ, քո երգերի լեզուն,  
Ով վեր է խոյանում մինչև այսօր,  
Պատռելով անսահման հորիզոններ լազուր,  
Լցված կարողությամբ, հավատով ու հույսով:

Այդ ինչ երգ է, ծերուկ, որ հնչում է դեռ գոռ,  
Եվ մեզանից հետո կշեփորի դարեր,  
Պայծառ և հողմաթև արեգակի ներքո,-  
Օ՛, երգերի դու հայր, երգիչների արև...

Տուր մեզ երգիդ ոգին, այնքան հզոր, պայծառ.  
Ուժը նրա անսայթ, գերագույն, ահառիկ,  
Որ նոր խնդությունով ու հավատով անծայր  
Նոր-նոր հորիզոններ ու սահմաններ առնի...

### ՄՈՌԱՅԵԼ ԵՄ ՎԱՂՈՒՅ

Մոռացել եմ վաղուց լիրիկայի լեզուն,  
Ինձ էպիզմն է գերել իր թևերով արձակ,  
Սակայն քաղցր է հիշել ն՛ կրակ, ն՛ հուզում,  
Նվ օրերը այն, որ արդեն հեքիաթ դարձան:

Ջեմ մոռացել ես քեզ, և ոչ մի լուսե ձեռք  
Քո պատկերը ինձնից չի գողացել թաքուն,  
Ինչքան դու հեռացել ու հեքիաթ ես դարձել,  
Այնքան քո կարոտն է հիմա սիրտս թակում:

Քո կարոտն է հեռու, որպես ջրվեժ վայրի,  
Հիմա երգն իմ հուզում էպիկական ու պարզ,  
Այդ լուսինն է ելնում բարձր լեռան ծայրից,  
Այդ աստղերն են խնդում լուսնին շուրջպար կապած:

Մոռացել եմ վաղուց լիրիկայի լեզուն,  
Ինձ էպիզմն է գերել իր թևերով արձակ,  
Սակայն քաղցր է հիշել ն՛ կրակ, ն՛ հուզում,  
Նվ օրերը այն, որ արդեն հեքիաթ դարձան:

## ԵՐԳԵՐ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1

Ես ձեզ սիրել եմ և՛ քրոջ նման,  
Ես ձեզ սիրել եմ և՛ սիրով անծայր.  
Կսիրեմ ես ձեզ նույն սիրով ցմահ,  
Աղջիկներ իմ լավ, աղջիկներ պայծառ...

Շատերդ ինձ եք թախիծ պատձառել,  
Շատերիդ ես եմ թողել կարոտով.  
Լուսինն է կարծես կապույտում սառել,  
Որպես քահանա ձերմակ, աղոթող:

Ես ձեզ հիշում եմ մեկ-մեկ, իմ սերեր,  
Եվ ձեր կարոտն եմ իմ երգով ջրում  
Այն, որ ոչ մի սիրտ լացով չբերեց,  
Այն, որ հեռու էր, մի՛ֆ էր և ուրու...

Ձեզ համար հիմա այլ սիրտ եմ երգում,  
Շատերը ձեզնից մանուկներ ունեք,  
Բայց ձեր անունը մնաց իմ երգում,  
Թեպետ մազերիս աստում է ձյունը:

Ես դուրս եմ գալիս, մայթերի վրա,-  
Աղջիկներ անգին, լուսե նոր սերեր,  
Որոնք աճում են երգով հուրհրան,  
Որոնց կուզեի գրկել, համբուրել...

Եվ քրոջ նման կուզեի սիրել,  
Կուզեի սիրել սիրով իսկական,  
Ինչպես թափվում է ջրվեժը բյուրեղ  
Արտերի վրա, հողերի պապակ:-

Ես չեմ նեղանում ձեզանից երբեք,  
Ես ձեր դեմ ոչ մի բողոք չեմ բանում,  
Խնդրում եմ դուք էլ սիրով ինձ ներեք,-  
Աղջիկներ իմ լավ ու պայծառանուն...

2

Արևը դուրս եկավ, օրը պարզ ու լուսե  
Քո սրտում կուտակված այնքան կարոտ ու սեր:  
Ծառերի տակ երգեց ինչ-որ աղջիկ՝ կամաց,  
Ծառերը շրշացին անտես ու ակամա...

Ծառերը մնացին շվար՝ ջրի վրա,-  
Այն, ինչ անցյալ դառավ – հանգավ որպես կրակ:  
Էլ չես բերի նրան, ինչ գնով էլ լինի,  
Այստեղ քեզ չի օգնի ոչ երգը, ոչ գինին...

3

Ես ձեզ լավ եմ ձանաչում,  
Եվ սիրել եմ շատերիդ.-  
Մերթ կրակ եք, մերթ էլ ջուր:

Աչքերով ջինջ եթերի  
Նորից ինձ եք դուք կանչում,  
Կարկաչի պես գետերի...

Ախ, սիրել եմ շատերիդ  
Աչքերով ջինջ, եթերի,-  
Ախ, սիրել եմ շատերիդ  
Ու հեռացել շատերից:

4

Արև նարնջագույն, արև բարկ ու լուսե,  
Քեզ համար եմ, աղջիկ, այս տողերը հյուսել:

Իմ բոլոր երգերից լավը քեզ եմ հիշում.  
Նորից գիշեր կիջնի և առվակը խշշուն,

Քո ծիծաղի նման արծաթ ձայն կհանի  
Եվ կդողա լույսը վերջին պատուհանից...

Ահա ձյունն էլ իջավ, բայց դու չկաս, չկաս...  
Երբ որ ձյունը նստի,- դու ասացիր, կգամ,

Խոր հավատով հողը էլի ձերմակ հագավ,  
Ես քո ձանապարհին սպասում եմ սակայն:

Իմ փոքրիկ, իմ մայիս, դարձիր, դարձիր շուտով,  
Պոետն սպասում է մի անհուն կարոտով:

Պոետը հիշում է քո մասին շատ գիշեր,  
Պոետը թերթում է այնքան անգին հուշեր,-

Իր երկրի նման նա սիրտ ունի պայծառ  
Եվ երգում է սերն իր, որ ջրի պես անցավ...

Եվ երգում է նա քեզ իր հույզերում պայծառ  
Վերադարձի սեր իմ, վերադարձի անցավ...

Արևը ցած կիջնի լեռների վրա,  
Հետո գիշեր կգա ու արծաթ վրան...

Ես կմնամ ձամփեքին տխուր նայելիս,  
Իմ սեր, պայծառ ծիածան, իմ ջիմջ հայելի:–

Քո մասին գրել եմ ն՛ լավ, ն՛ վատ տողեր,  
Ես քեզ այնքան անգին երգեր եմ ներբողել:–

Այն, որ անցյալ դառավ, թողնենք քամիներին,  
Վերադարձի անցավ, և երգին իմ ներիր...



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՂ .....	5
ՄԵՆՔ ԴԱՐԵՐՈՎ .....	9
Թոն է գալիս, ծառն է դողում .....	11
ՄԱՆԿԱՆ .....	12
ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ .....	14
ԳՆԱՅ ՍԱՐՈՎ ԻՄ ԵՂՆԻԿԸ .....	16
ԵՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՄԵՆԻՅ ՇԱՏ .....	17
ԷԼԵԳԻԱ .....	18
«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» .....	21
Այդ հայացքով իմ սևեռուն .....	23
ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ .....	24
ԿԱՐՈՏ .....	25
ԵՎԱ .....	26
ԱՆԵԼՅԱ .....	28
ԵԼԵՆԱ .....	30
ՆԱՄԱԿ .....	32
ՀՈՒՇԵՐ .....	34
ՄԱՅՐ ԱՐԱՔՍԻ ԱՓԵՐԻՆ .....	35
ՏԱՂԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒ .....	39
ՆՄԱՆ ԵՍ ԻՆՁ .....	41
ԵՐԳ ԻՆՁ ՀԱՄԱՐ .....	42
ԵՐԿՈՒՆՔԸ .....	43
ՀՐԱՎԵՐ .....	44
Կռունկների երանը դեռ ձախրում է օդի մեջ .....	46
ՔԱՄԻՆԵՐ .....	47

ՏԱՂԱՐԱՆ .....	50
Մոլոր-մալուր ընկած քուչա ման եմ գալիս .....	50
Սիրածիդ հետ անցար քուչով, սրտիս մեջը .....	51
Սերը սրտիս աշխարհ եկա, հանդիպեցիր .....	52
Կանգնել էի ձեր բաղչի քով .....	53
Իմ յարն էսօր ման էր .....	54
Արագից եմ ես ջուր խմել, ծաղիկ քաղել Արարատից .....	55
Երևանի ձանապարհին պատահեցի երեկ քեզ, յսր .....	56
Շատ խաղ կապի գյոզալներին .....	57
Ջուր կերթայիք օրոր-շորոր, այ գյոզալներ .....	58
ԿՐԵՄԼԸ .....	59
ՌԱԻՍԱ ՌԻԺԻԿ .....	69
Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻՆ .....	75
ԾԽՈՒՄ ԵՆ ՆՈՐԻՑ .....	77
ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ .....	79
Նորից գարնան երկինքն է կապույտ ցոլքերն իր .....	81
ՍՈՃԻՆԵՐԻ ՊՈՒՐԱԿՈՒՄ .....	82

ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆ  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ТАТУЛ ХУРЯН  
СТИХОТВОРЕНИЯ

Կազմեց Արքմենիկ Նիկողոսյանը  
Հրատ. խմբագիր՝ Արմեն Ավանեսյանը  
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի  
Շարվածքը՝ Աննա Մարգարյանի

Չափսը՝ 60x84 1/16:  
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ<sup>2</sup> 1.8 ծավալային կշիռով:  
Ծավալը՝ 8.0 տպ. մամուլ:  
Տառատեսակը՝ Ghabuzian Gohar:  
Տպաքանակը՝ 400:  
Տպագրվել է «ԳԵԱ» տպագրատանը:  
Հասցե՝ ք. Երևան, Հ. Հակոբյան 3:  
Գինը պայմանագրային:



**ԱՐՄԱՎ**

---

հրատարակչություն

Ք. Երևան, 16 ք. 18 / 94  
հեռ.՝ (+374) 10-34-73-35  
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru